

ԳՐԱԴԻՍՈՒՄՈՒԹԻՒՆ, ԱՍՏԵՆԱԿԻՏՈՒԹԻՒՆ

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԵԼԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՉԷ

Մեր մեծ երախտաւորներից մէկի՝ Գարեգին Նժդեհի սրելոճագործութիւնները առավել ամբողջական ժողովածուի արեսքով Երեսնամ և յոս ևն ընծայուել երկու անգամ՝ 2002 թ՝ արեղեանական ուր ուղղագրութեամբ (Երկեր, 2 հատորով, Արխիվային գործի գործակալութիւն հրար.) և 2006 թ.՝ մեծ մասամբ դասական ուղղագրութեամբ (Նարըն-րիբ, Ամարաս հրար.): Վերջին հրարարակութիւնում երկերը ներկայացում են այն-պէս, ինչպէս գրել է հեղինակը, իսկ երկրորդ հրարարակութիւնում ազարօրէն կարա-րուել են բնագրային փոփոխութիւններ: Ուղղագրութեան փոփոխումը, թէև ոչ ցանկալի, բայց հասկանալի է. պէրբ էր րորբ րալ Նայասրանի ժամանակակից ուղղագրութեան պահանջներին: Շրջանառում էր նաև ոչ համոզիչ այն պարճառարանութիւնը, թէ անհրաժեշտ էր աւելի մարչելի դարձնել ընթերցող լայն հասարակութեանը: Սակայն դրա հեր մէկրել կազմողներն ու իմբագրական մասնախումբն ինչի՞ց էլնելով են լեզու-ական աւերածութիւններ կարարել, որոնք րառացիօրէն հանդիպում են իրարանչիւր էջում. սա արդէն թէ՛ անցանկալի է, թէ՛ անհասկանալի: Ասումի մէջ համոզուելու համար բաական է համարել թիչ վերը նշում երկու հրարարակութիւնները: Նպարակ չունե-նալով մանրակրկիւր լեզուական ընութեան առնելու ամբողջ ժողովածուն, ինչը մի յօդու-ածի սահմաններում հնարատր չէ, մեր կանգ կառնելը մէկ առանցքային հարցի վրայ, որն ի ցոյց կդնի կարարում փոփոխութիւնների մակարդակը:

Գ. Նժդեհը, իր սրելոճագործութիւնները գրելով արեւելահայերէնով, շարադրան-քում, նախադասութիւնների մէջ, մերթընդմերթ գործածել է արեւմտահայերէն թերակա-նական ձեւեր, բառեր ու բառային րարբերակներ: Արեւմտահայերէնի այս բոլոր րար-րերը գրէթէ ամբողջապէս վերածուել են արեւելահայերէնի: Մինչդեռ դրանք ոչ միայն չէին խանգարում հասկանալի լինելուն, այլև ունէին գեղարուեսրական ու ոճական ար-ժէք: Աւելին. միրում էին հայրենասիրական, հասարակական, մեր ժողովրդի երկու հա-րումների միասնականացման մղումներն արարահայրելուն՝ թէկուզ նախ լեզուական փոխերթափանցումների ձեւով: Ուրեմն ծրագրային էին:

Սրբուն մեր ցոյց կրանք, թէ որպէս կարարում փոփոխութիւնների արդիւնք, ինչ է սրացուել: Ըսար որում, օրինակներ գրնելու համար, ինչպէս ընթերցողն ինքն էլ կհա-մոզուի, հարկ չկա ամբողջ ժողովածուին դիմելու. կբարարարուենք միայն «Բաց նամակ Մայր Արլինին» յօդումով, որրել, ինչպէս մանրակրկիւրի մէջ, երեւան է գալիս կարա-

րուած փոփոխութիւնների գրեթէ ողջ բազմազանութիւնը: Միաժամանակ այսպէս հնարաւոր կլինի, րեդի խնայողութեան պահանջով, ամէն օրինակ բերելիս էջեր չյիշարակելու: Նշենք միայն, որ դասական ուղղագրութեամբ ժողովածուում՝ Նարեկայրիւմ, «Բաց նամակ Մայրլ Արլէնին» յօդուածի րպագրութեան էջերն են 461-673, իսկ արեղեանական ուղղագրութեամբ «Երկեր»-ի 1-ին հարորում՝ 332-343:

Եւ այսպէս անդրադառնալը կարարուած փոփոխութիւնների րիպերին:

1. Գ. Նժդեհի բնագրերում -ութիւն վերջածանցով գոյականները սեռական յոլովում յաճախ ունեն -ց- մասնիկը. այսինքն դրուած են յոգնակի թոլով՝ կազմուածքը յոգնակիակերպով: Այսպիսի բառաձեւերը մինչև XX դարի առաջին կէտքն ընդունուած էին նաեւ արեւելահայերէնում: Մինչեղ որանք դարձել են եզակի, բնականաբար, կրճարուել է -ց- մասնիկը: Ինչպէս. «...ընկերային յեղափոխութեանց ուրուականով կը սպառնայ...»: Խմբագրուել է. «...ընկերային եղափոխոյան ուրվականով կսպառնա...». «...թոր րեսակի դժբախտութեանց... ակնաղբիւրին անէճք...», («...թոր րեսակի դժբախտոյան ակնաղբիւրին անէճք...»)*:

2. Արեւմտահայերէնում անձի անուն ունեցող գոյականները հայցական յոլովում քերականօրէն նմանուում են ուղղական յոլովին, որոշեալ առման դէպքում սրանում են -ը յօղը. ինչպէս իրի առման դէպքում: Արեւելահայերէնում քերականօրէն նմանուում են րրական յոլովածելին, որոշեալի դէպքում սրանում են -ն յօղը: «...պիւրի հոգելիոխէր մեր ժողովուրդը...»: («...պիւրի հոգելիոխէր մեր ժողովրդին...»): «Նայեղելով չէք բժշկի հիւանղը...»: («Նայեղելով չեք բժշկի հիվանղին...»):

3. Արեւմտահայերէնում հայցական յոլովում դերանուններն ընդունում են գ- նախդիրը: Սա մի հուշ-մասնիկ է՝ մնացած հին հայոց լեզուից եւ սիրելի է մեզ: Արեւելահայերէնի պահանջից ելնելով՝ մասնախումբը գ-նախղիրը կրճարել է. «Զայն հարսրութեան... վերածուելո՞ համար...» (այն հարսրոյան... վերածուելո՞ համար...):

4. Արեւմտահայերէնում բացառական յոլովը անորոշի դէպքում ունենում է -է վերջաւորութիւնը, որոշեալի դէպքում աւելանում է -ն յօղը: Արեւելահայերէնում այս յոլովը կազմուում է -ից վերջաւորութեամբ: «Ամերիկեան մի յուրջ ամսագրի էջերէն...» (Ամերիկյան մի յուրջ ամսագրի էջերից...). «...եթէ Ձեր գրչէն զարշէ ամեն ճշմարիտ հայ...» (... եթէ Ձեր գրչից զարշի ամեն ճշմարիտ հայ...): Ըստ որում, նույն փոփոխութիւնն է նաեւ անորոշ դերբայների յոլովման դէպքում. «...գերիշխան վիճակը կորցնելէ ետոյ...» (...գերիշխան վիճակը կորցնելուց ետոյ...): «Ժողովրդի վերադասրիարակիչը լինելէ առաջ...» (Ժողովրդի վերադասրիարակիչը լինելուց առաջ...): Բացառական յոլովածելի այս փոփոխութիւնն անհամեմար յաճախ է պարահում: Գ. Նժդեհի միայն սոյն յօդուածում հաշուել ենք աւելի քան 25 դէպք:

5. Գործիականով դրուած միջոցաւ բառաձեւը դարձել է միջոցով: «...նրա միջոցաւ... կառչած չըմնայ...» (...նրա միջոցով...կառչած չմնա...). «...իր ընրրանիի միջոցաւ...» (...իր ընրրանիի միջոցով...):

* Այսույեարեւ անընղունելի փոփոխութիւնները կներկայացունեն փակագծերում:

6. Յարակարար ներկայ ժամանակը փոխարինուել է վաղակարար ներկայով, ուրեմն յարակարար դերբայը՝ վաղակարարով. «...դեռ ոչ գոհաբերած, ոչ էլ փառապած էք այն ժողովրդի համար» (...դեռ ոչ գոհաբերել, ոչ էլ փառապել էք այն ժողովրդի համար). «...պարտականություն են զգացած գոռալու հայության երեսին...» (...պարտականություն են զգացել գոռալու հայության երեսին...):

7. Ըղձական եղանակի ներկայի եզակի երրորդ դեմքի բայի -է վերջաւորութիւնը փոխարինուել է ի-ով. «...եթէ Ձեր գրչէն զարշէ ամեն ճշմարիտ հայ...» (...եթե Ձեր գրչից զարշի ամեն ճշմարիտ հայ...), «...կենդանի մեռեալ հոջակէ...» (...կենդանի մեռյալ հոջակի...):

8. Յօդուածում գործածուած են -ի- խոնարհման բայեր, որոնք յայտուկ են արեւմտահայերէնին: Դրանք բոլորը դարձել են -ե- խոնարհման՝ ինչպէս արեւելահայերէնում է: «...ի՛նչ գործ ունին...» (...ի՛նչ գործ ունեն...): «...փողոցի լեզուով խօսիլ...» (փողոցի լեզվով խոսել...):

9. Կը եղանակիչով կազմուած բայաձեւերը մեծ մասամբ վերածուել են անկարար դերբայով կազմուածների. «...դեռ կ'ապրին հայն ու Նայաստանը...» (...դեռ ապրում են հայն ու Նայաստանը...): «...Ձեզ փրում փաղանդը ինչի՞ կը ծառայեցնէք...» (...Ձեզ փրված փաղանդը ինչի՞ էք ծառայեցնում...): Այս փոփոխութիւնը եւս շար փարածուածներից է թէ՛ ամբողջ ժողովածուում, թէ՛ խնդրոյ առարկայ երկում: Վերջինում հաշուել ենք ատկի բան 15 դէպք:

10. Արեւմտահայերէնին բնորոշ պարճառականի բայաձեւերը վերածուել են արեւելահայերէն ձեւերի. «...անմահացոյց հայ վրիժակը...» (...անմահացրեց հայ վրիժակը...), «...օրինեց ու քաղցրացոյց մահը հերոսների...» (...օրինեց ու քաղցրացրեց մահը հերոսներին...):

11. Բնագրային փոփոխութիւնները միայն քերականական լինելով չեն սահմանափակուում: Որոշ բառային փարբերակներ փոխարինուած են ուրիշներով եւ որոշ բառեր՝ իրենց հոմանիշներով. պրոպագանդ (պրոպագանդա), ռոյնմայիական (օյնմայիական), կու լայ (կլացի), գերման (գերմանական), սխալանք (սխալ):

12. Մի հրապարակման այսպէս անփութօրէն ձեռք զարկելը, բնականաբար, պիտի բերէր նաեւ իմաստային սխալներ, որոնք այսպէտ երէքն են:

ա) Բնագրում կարդում ենք. «Աշխարհը մեզ կը հալածէ մեր անցեալ մեծութեան համար»: Մէջբերումը հրեաների կարծիքն է իրենց մասին: Կը հալածէ բայաձեւը, կազմուած կը եղանակիչով, շարունակական ներկայի բայաձեւերից է, որը բնորոշ է արեւմտահայերէնին եւ նշանակում է՝ հալածում է: Փոխուած փարբերակում. «Աշխարհը մեզ կհալածի մեր անցյալ մեծության համար»: Կհալածի բայաձեւը դրուած է ենթացողական եղանակի ապառնի ժամանակով, ինչպէս եւ է արեւելահայերէնում. այսինքն՝ դեռ հեղափոխում կհալածի:

բ) Գ. Նժդեհը գրել է. «...իսկ Մարցեալը կը չարախնդար...»: Այսպէտ Մարցեալը յայտուկ անուն է եւ սկսում է մեծապատով, կը չարախնդար բայաձեւը դրուած է եզակի թռով: Փոխուած ձեւն է. «...իսկ մնացածները չարախնդում էին...»: Յարուկ անուն չկայ այլ

«մեկնաբանություն» պարծառով, և համապարասխանաբար, բայն էլ դրուած է յոգնակի թուով: Նախադասութեան երէք բառից երկուսը սխալ է:

զ) Երրորդ իմաստային վրիպումը ընթերցողին հանդիպում է բաց նամակի հենց սկզբում: Նախնական արարեւակում գրուած է. «...Ձեզ՝ «պարտով մեռնելու անընդունակ ցեղի մը գաւակ»-ը համարելով...»: Նանրայայտ է, որ մը-ն մի (մէկ) թուականն է ու կարարում է նաև անորոշ յօդի գործառոյթ: Արեւմտահայերէնում դրուում է այն գոյականից յետոյ, որի հետ առնչում է: Ուրեմն՝ պէտք է հասկանալ «մի ցեղի»: Մինչդեռ նոր ուղղագրութեամբ հրատարակութեան մէջ իմաստն այլ է. «...Ձեզ՝ «պարտով մեռնելու անընդունակ ցեղի մի գաւակ»-ը համարելով...»: Արեւելահայերէնում մի-ն դրուում է առնչակից գոյականից առաջ և այսպէս սրացուել է «մի գաւակ»:

Կան նաև այլ կարգի արարեւութիւններ, և քանի որ բաց նամակում փոքրաթիւ են՝ դրանց վրա կանգ չենք առնելու:

Ուղղագրութեան փոփոխութիւնը չի նշանակում փոխադրութիւններ կարարել մեր մի լեզուաճիւղից միւսը, ըստ որում՝ ոչ միայն բառային, այլև արեւմտային հարուածների: Արեւմտահայ սկզբնաղբիւրներից կարարած Գ. Նժդեհի մէջբերումները նոյնպէս վերածուել են արեւելահայերէնի: Մի՞թէ, ասեմք, Երուանդ Օրեանին կամ Ռուբէն Մեւակին մենք կարդում ենք արեւելահայերէն:

Երկու ժողովածուում էլ բաց նամակի համար նշուած է միեւնոյն սկզբնաղբիւրը՝ «Նոր Արաքս, 1930, NN11, 12, 15, 18»: Սակայն նոր ուղղագրութեամբ հրատարակութեան մէջ այնքան մեծաթիւ են և այնքան բազմազան արարեւութիւնները, որ կարծես սկզբնաղբիւրն այլ է: Գ. Նժդեհի երկերի մէջ քիչ թէ շատէ լրջօրէն խորանալու համար այս հրատարակութիւնը հիմք ընդունելը սխալ կլինէր, քանի որ հետազօտողը կրնկնի բառային ու քերականական բազմաթիւ ապակողմնորոշիչ թիրիմացութիւնների մէջ:

Երկու ժողովածուների համեմատութիւնից եզրակացնում ես.

-աչքի առաջ է օրինակն այն բանի, թէ ինչպէս պէտք չէ հրատարակել մեր մեծ երախտաւորի սարկածագործութիւնները,

-պարկառանքով ու խնամքով է անհրաժեշտ վերաբերուել նրա գրական ժառանգութեանը և միայն այդպէս ներկայացնել հանրութեանը:

Վերջում անհրաժեշտ է ընդգծել, որ Գարեգին Նժդեհի երկերի երկհարորեակը կազմողները ընդհանուր առմամբ շատ շնորհակալ աշխատանք են կարարել: Եւ եթէ մենք ուշադրութիւն հրաւիրեցինք թոյլ քրուած լեզուական սխալների վրայ, ապա այդ արեցինք հետագայ հրատարակութիւնները կարարեալ րեսնելու բարի դիտաւորութեամբ միայն:

ԵՐԶԱՆԻԿ ԳԵԴՈՐԳՅԱՆ